Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Լեռնապատի Ե.Դալլաքյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (29 դասաժամ), մայրենիի (6 դասաժամ),պատմության(6 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար մինչև 2026թ-ի սեպտեմբերի 14-ը ներառյալ մասնակիցը ԴԿՏՀ-ում լրացնում է դիմումը և մուտքագրում հետևյալ փաստաթղթերի լուսապատճենները՝

1. դիմում,ինքնակենսագրություն (ձև 1), 1 լուսանկար 3x4 չափի
2. բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ), (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ)
3.անձը հաստատող փաստաթուղթ,
4 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
6. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
7 հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
8. տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
9. «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի պահանջով հերթական ատեստավորման արդյունքում աշխատանքից ազատված լինելու դեպքում հերթական ատեստավորումն անցած լինելու մասին տեղեկանք
10. «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետով) պահանջվող համապատասխան փաստաթուղթ:

«Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին հաապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Մասնակիցը ներբեռնված փաստաթղթերի բնօրինակները 2026թ.օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 11-ը ներառյալ ժամը 10:00-ից 14:00- առձեռն ներկայացնում է տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձին, որը դրանք համեմատում է ԴԿՏՀ-ում ներբեռնված փաստաթղթերի հետ, ինչից հետո նույն օրը բնօրինակները վերադարձնում է մասնակցին:

Եթե ներկայացված փաստաթղթեր ցանկն ամբողջական չէ,կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև մրցոլյթին նախորդող աշխատանքային օրը առձեռն ներկայացնել,իսկ ԴԿՏՀ-ում ներբեռված փաստաթղթերի դեպքում նույն համակարգում ներբեռնել ներբեռնել անհրաժեշտ փաստաթղթերը:

Մրցույթը տեղի կունենա **2026թ. սեպտեմբերի 16-ին՝ ժամը 12:00-ին**, Լեռնապատի Ե.Դալլաքյանի անվան միջն. դպրոցում, հասցե՝Լոռու մարզ,Փամբակ համայնք, գ.Լեռնապատ 38փող. 4/1: Տեղեկությունների համար զանգահարել 077654012 հեռախոսահամարով: